ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՆՇԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երկարատև ու ծանր հիվանդությունից հետո 1966 թ. օգոստոսին Պրագա քաղաքում, 72 տարեկան հասակում վախճանվեց նշանավոր արևելագետ, պատմաբան և բանասեր պրոֆ. Նշան Մարտիրոսյանը։

Ունենալով լեզվագիտական և պատմագիտական բարձր պատրաստականություն, լինելով ականավոր գիտնական Բ. Հրոզնու լավագույն աշակերտներից ու հետևորդներից մեկը, նա ավելի քան չորս տասնամյակ բազմակողմանիորեն ուսումնասիրել է Հին Արևելքի, հատկապես Առաջավոր Ասիայի հնագույն տեղաբնիկների լեզուն, մշակույթը և պատմությունը։ Այդ նա էր, որ առաջին անգամ, դեռևս ուսանողական տարիներին կարողացավ որոշել խեթական երբեմնի հզոր թագավորության արխիվից հայտնաբերված ու վերծանված սեպագիր տախտակներում հիշատակվող մի շարք ցեղային միավորումների ու երկրների տեղադրությունը Հայկական լեռնաշխարհում։

Նշան Մարտիրոսյանը ծնվել է 1894 թ., Խարբերդի գավառի Խուռնավիլ գյուղում։ Սկզբնական կրթությունն ստացել է տեղի նախակրթական դպրոցում։ 1910 թ. նրան հաջողվում է հասնել Ավստրիա և հաստատվել Ռոնսբերգ քաղաքում, որտեղ և ընդունվում է տեղի գերմանական միջնակարգ դպրոցը։ 1918 թ. ավարտում է դպրոցը և վերադառնում Կ. Պոլիս։ Նույն տարում հաջող քննություններ հանձնելով, ընդունվում է Պրագայի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը։

Սակայն նա իրեն նվիրում է արևելագիտություններ և մեծանուն արևելագետ Բ. Հրոզնու մոտ ուսումնասիրում է շումերերենը, ակկադերենը, ասուրերենը և խեթերենը։

Արդեն ուսանողական տարիներին դրսևորվում են Մարտիրոսյանի ընդունակությունները հին արևելյան բանասիրության ու լեզվաբանության բնագավառում։ Նրան է պատկանում խեթերենի և հայերենի մի շարք ընդհանրությունների հայտնաբերումը։ Իր առաջին իսկ գիտական հոդվածներում նա փորձում է պարզել հայերենի բնույթը և զարգացնում է այն թեզը, ըստ որի հայերենը, խեթերենի հետ միասին, ասիանիկ. փոքրասիական լեզու է (ի դեպ՝ այդ տեսակետը նա չփոխեց մինչև իր կյանքի վերջը)։

1926 թ. Մարտիրոսյանը ստանում է դոկտորի գիտական աստիճան և մեկ տարի հետո դասախոսական աշխատանքի անցնում Պրագայի համալսարանում։

1930—40-ական թթ. Ն. Մարտիրոսյանը հանդես է գալիս հայ գիտարանության, պատմության ու աշխարհագրության նվիրված մի շարք հոդվածներով։ Նրան հատկապես հետաքրքրել են փոքրասիական և հայկական պանթեոնների փոխհարաբերությունների հարցերը։ Ն. Մարտիրոսյանի կատարած պատմա-աշխարհագրական դիտողությունները լայն ճանաչում են գտել արևելագիտության մեջ։

Նրան երկար տարիներ գրաղեցրել են II հազարամյակում (մ. թ. ա.) Հայկական լեռնաշխարհում կազմավորված Հայասա խոշոր ցեղային միության պատմության հարցերը։ 1957 թ. «Խարբերդ և իր Ոսկեղեն դաշտը» հուշամատ-

լանում լույս տեսած «Խարբերդի շրջանները՝ Հայոց հնագույն օրրանը» մեծածավալ հոդվածը վկայում է, որ իրոք Հայաստանի պատմությանը նվիրված նրա ուսումնասիրություններ կարող էր կարևոր ներդրում լինել հայագիտության մեջ։

Նշան Մարտիրոսյանը մեծ ողորմությամբ ու հիացմունքով էր ընդունում սովետահայ պատմաբանների նվաճումներն ու հաջողությունները։ Նա հոգեկան մեծ ցնծություն ապրեց իր կյանքի վերջին տարիներին, երբ իր հայրենիքում 1963 թ. լույս տեսավ Գիլգամեշ դյուցազնավեպին նվիրված նրա աշխատությունը։

Երկար տարիներ նա ջերմորեն ցանկանում էր այցելել մայր հայրենիք, սակայն ծանր հիվանդությունն ու մահը թույլ չտվեցին իրականացնել այդ ցանկությունը։

Լ. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ